
ՈՒԿՐԱԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄՅԱՆԵՑ-ՊՈՂԻԼՍԿ
ՔԱՂԱՔԻ XVI–XVII ԴԱՐԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԼԵԶՎՈՒՄ

ՕԼԵՔՍԱՆԴԻ ԲՈԺԿՈ * (ԿԻՆ)

Հայկական առաջին բնակավայրերը ուկրաինական հողում, ըստ պատմաբանների, ստեղծվել են Կիևյան Ռուսիայի օրոք¹: Դարերի ընթացքում այդ բնակավայրերի թիվը հասել է մոտ 70-ի: Ամենախոշորները հիմնադրվել են XIII–XIV դարերում Կամյանեց-Պոդիլսկ և Լվով քաղաքներում: Բնակավայրերն առանձին համայնքների մեջ են միավորվել XIV դարի II կեսին: 1363 թ. արդեն Լվովն ուներ հայ եպիսկոպոսի ամբիոն², իսկ 1398 թվականին, ինչպես վկայում է հայ վաճառական Սինան Խուլյուբեյի հուշագրությունը, Կամյանեց-Պոդիլսկում կառուցվել է Սուրբ Նիկողայոսի հայկական եկեղեցին³: Ավելի վաղ՝ 1356 թվականի հունիսի 17-ին, լեհ թագավոր Կազիմիր III Մեծի հրովարտակով այս երկու քաղաքներին թույլատրվել է ունենալ հայկական դատավարություն⁴:

Ուկրաինայի տարածքում բնակվող հայ համայնքների դատավարության հիմքում ընկած էր Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագիրքը»: Համայնքների դատարաններում մշտապես պահվել են վավերագրեր՝ գրված սկզբում հայերեն, իսկ XVI դարի 70-ական թվականներից՝ արդեն մի լեզվով, որը գիտության մեջ ընդունված է կոչել հայատառ-դիչադերեն⁵: Կիևի Պետական կենտրոնական արխիվում պահպանվում է Կամյանեց-Պոդիլսկի՝ հայերենով գրված հայկական դատավարական վավերագրային գրքերի մի մասը, որոնք հրատարակվել են Երևանում առանձին հատորով՝ հայ-ուկրաինական պատմական կապերի հայտնի հետազոտող, այս թեմայով բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ Վ. Ռ. Գրիգորյանի աշխատասիրությամբ⁶: Հատորում ներկայացված են 632 հետաքրքրագույն փաստաթղթեր, որոնք վերաբերում են 1559 թ. օգոստոսի 7-ից մինչև 1614 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածին:

* Հեղինակը հայ հասարակայնությանը հայտնի Ալեքսանդր Բոժկոն է (ծնթ. խմբ.):

¹ Ya. D a s h k e v y c h. L'etablissement des Armeniens en Ukraine pendant les XI-XVIII siecles dans "Armenia and Ukraine by Ya. Dashkevych. Lviv-New-York-2001", p. 103.

² Е. С е ц и н с к и й. Город Каменец-Подольский. Киев. 1895, с. 176.

³ X p. К у ч у к - И о а н н е с о в. Старинные армянские надписи и старинные рукописи в пределах Юго-Западной Руси и в Крыму. Древности восточные. Т. 2. Вып. 3. М., 1903, с. 114.

⁴ A. P r z e z d z i e s k i. Podole, Wolyn, Ukraina. Obrazy miejsc czasow. Т. 2. Wilno, 1841, p. 1, 147-148.

⁵ А. Н. Г а р к а в е ц. Конвергенция армяно-кыпчакского языка к славянским в XVI-XVII вв. Киев. 1979.

⁶ Կամյանեց-Պոդիլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI-XVII դդ). աշխատասիրությամբ Վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963 (բերված օրինակները ըստ այս ժողովածուի. փակագծերում վավերագրերի հերթական համարներն են):

Հայ դատական վավերագրերի քերականական առանձնահատկությունները թույլ են տալիս այդ լեզուն (որով գրված են այդ վավերագրերը) համարելու միջին հայերեն, այսպես կոչված «ռամկորեն»՝ արևմտահայ բարբառներին բնորոշ հատկանիշներով: Քանի որ Կամյանեց-Պոդիլսկի և Լվովի հայկական բնակչության մեծագույն մասի նախնիները Ուկրաինա էին եկել Ղրիմից, ուր գաղթել էին թուրք-սելջուկների՝ հայոց մայրաքաղաք Անին 1064 թ. կործանելուց հետո, բնականաբար պահպանել էին իրենց տարածքի բարբառի տարրերը: Միաժամանակ ապրելով այնպիսի վայրերում, որտեղ, բացի ուկրաինացիներից, լեհերից, բնակվում էին նաև հրեաներ, մոլդովացիներ և գերմանացիներ, այլև կապեր պահպանելով մերձակա և հեռավոր այլ վայրերի հետ (Վալախիա, Հունգարիա, Թուրքիա, Վերդնեպրյան Ուկրաինա, Մոսկովիա և այլն)՝ հայերը մեծապես ազդեցություն են կրել այդ ժողովուրդներից: Ամբողջական պատկերացում կազմելու համար, թե ինչպիսի պայմաններում է գործածվել հայերենը, հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թուրքախոս Ղրիմում երկար բնակվելու հետևանքով Կամյանեց-Պոդիլսկի հայերը կենցաղում օգտագործել են նաև դիչադերենը, որը անվանել են թուրքերեն կամ թաթարերեն: Եր աշխատություններից մեկում Յա. Ռ. Դաշկնիչը մեջբերում է եպիսկոպոս Ա. Մ. Գրացիանիի խոսքերը, որը XVII դարի սկզբում այսպես է գրել այդ մասին. «Սաղմոսները, որոնք երգվում էին եկեղեցում, գրված են հայերեն լեզվով և հայերեն տառերով, բայց դրանք հասկանում են միայն հոգևորականները, նրանք էլ, սակայն, սովորաբար խոսում են թուրքերեն կամ թաթարերեն»⁷:

Այս ամենը նշվել է հայոց լեզվի համընդհանուր գործածության ժամանակ, իսկ մասնավորապես այն ժամանակի փաստաթղթերի բնագրերում, որոնցում հանդիպում են զգալի թվով փոխառություններ: Ուշագրավ է մեկ մանրամասնություն. Կամյանեց-Պոդիլսկի հայ համայնքի դատավարական վավերագրերում ուկրաինաբանություններն ավելի շատ են, քան Լվովի համայնքի գրավոր հուշաթերթերում, որոնցում գերակշռում են լեհաբանությունները: Մա հավանաբար բացատրվում է լեհական գործոնի ավելի ուժեղ ազդեցությամբ լվովահայերի վրա: Միաժամանակ լեհերենը հասկանալի պատճառներով գերակշռում էր հողային այն տարածքների վարչական և պաշտոնական ոլորտներում, որտեղ կային հայկական բնակավայրեր: Եվ այնուամենայնիվ Կամյանեց-Պոդիլսկում հայերի և ուկրաինացիների բազմադարյա միատեղ, միասնական բնակությունը դարձավ բառապաշարի բավականաչափ միասնականացման կարևոր ցուցանիշ: Բազմաթիվ ուկրաիներեն տերմինների կամ հենց ուկրաիներեն ձևավորված տեղային-ինտերնացիոնալ բառերի առկայությունը վկայում է այս գործընթացում գրավոր և բանավոր ուկրաիներենի ազդեցիկ դերը:

Ուկրաինական փոխառությունների մեծ մասը կարելի է ներկայացնել երկու հիմնական թեմատիկ խմբով. հասարակական-քաղաքական և վարչական-պաշտոնական ու տնտեսական, օրինակ՝ արելացիա (գանգատ), արեսդ (վեր-

⁷ Я. Р. Да ш к е в и ч. Армянские колонии на Украине в источниках и литературе XV–XIX веков. Ереван. 1962, с. 55.

գիր), պուրմիսդր (քաղաքապետ), վոյթ (համայնքի ավագ), տեքրեդ (որոշում), տեբուդադ (պատգամավոր) (152), զաբիս (պարտացուցակ), իլախ (լեհ), ինվենդար (գույք), զազնա (բանտ), մադազին (պահեստ), մահարիչնիք (վկա), մգտա (վարձ), մինութայ (պատճեն), մոցնիյ // մոցովանիյ, ումոցովանիյ (բարձրաստիճան), բամեդնիյ, բոմոցնայ, բրիվիլեյա, փոթուրադոր, ռայդցա (230), ռաթա (խորհուրդ), ռաթուշ (քաղաքապետարան), սդադուդ (կանոնադրություն), ուհոտա (համաձայնագիր) (248), ուրյատնիք (աստիճանավոր) (244):

Բայեր՝ կազմված ուկրաիներենի անորոշ դերբայով՝ արելովատ առնել «վճար պահանջել», իսդիկովատ առնել «բողոքարկել», ցանովատ առնել «գնահատել» և այլն.

– կահ-կարասի, տնային ունեցվածք, հագուստ, զարդեղեն և այլն. ատամաշքա (կտորի տեսակ) (445), պեշքայ (օջախ), տակաո (տահուր), (283), տրուշլաք (445), զբադերդ (սփռոց) (445), քաֆդան, քոլփաք (գլխարկ) (283), քոֆա (445), լանցուխ (շոթա) (445), նահավիցա (շալվար), (136), նամիդ (283), օժիրիլիե (283), բիվե (զարեջուր), (421), բրիսդավքայ (445), ռուքումիյ (445), սվոյեց (283), սդոլ (445), թօրպայ (տոպրակ) (152), չարա (բաժակ), (445), շքադուլայ (445).

– դրամի, չափի և կշռի անվանումներ. հրունա, հրիվնայ (136) փողի ուկրաինական անվանումը, հրոշ (106), քամեն, քօբա, լօքօդ, սումա, դայլար (136), բոլմիսօք (445).

– արտադրամասնագիտական անվանումներ. պրովար (զարեջուր պատրաստող) (389), քօբիցա (դեզ), քրավեց (դերձակ) (136), միրոջնիք (ջրադացպան), բասիքա (մեղվանոց) (228), քօրչմա (պանդոկ) (421).

– զենքի տեսակներ. շապլա (սուս) (330), քրեսքա (150), հագովնիցայ (խոշոր հրացան) և այլն.

– վավերագրերում վավերացված եկեղեցական տոների անվանումներ, որոնք օգտագործվել են թվագրման համար. սվեդիյ Բեդրե (սուրբ Պետրոս) (122), բրովոտ (մեռելոց) (303).

– չեզոք բառապաշար. կվալդ, շլաք, փուրլասդըլ (445), բոլովըլ (եզի գույնը) (389), սիրըլ (գորշ) (389), բերիսդըլ (եզի, ձիու գույնը) (430), սիրեավըլ (մոխրագույն) (362), հնիտըլ (աշխեստ) (389), նոսադըլ (ձիու հիվանդություն) (82).

Ուկրաիներենը զգալի ազդեցություն է ունեցել հայ անվանաբանության (հայոց հատուկ անունների) կազմավորման վրա: Ինչպես հայատառ-դիչադեբենում, այնպես էլ քննվող վավերագրերում հանդիպում են բազմաթիվ հատուկ անուններ, որոնք կրել են հայերը: Այդ անունները բաժանվում են՝ ա) հայերեն անունների՝ Մանուշակ (63), Գրիգոր (149), Աստուածատուր (468), Լևոն (452), բ) ուկրաինական անուններ և ազգանունների՝ Եուրքո (22 a11), Հրիցքո (603), Լեվքո (205), Անտրիյ (410), Նորսե Բրօսո (616), Հօլուպ (211), Բօնեձեալքօ (356), Պիլաշ (571) և այլն, գ) ուկրաիներեն ձևավորված հայկական անունների՝ Խաչքո (16), օրինակ նվազափառաշակյան է Խաչատուրից, որից առաջացել է Խաչենքո (89) ազգանունը, Ազիզքո (200), Միլքո, Կոհարքո (263) (Գոհար անձնանունից) անուններ և այլն:

Հատկանշական է, որ գրիչները հստակ տարբերակել են միևնույն արմատից բխող հայկական և ուկրաինական անունները, այսպես՝ հայկական Գրիգոր-ը երբեք չեն շփոթել ուկրաինական Հրիցքո (603)-ի հետ, թեև ենթատեքստից պարզորոշ է, որ դրանք կրողները հայեր էին: Նույնը վերաբերում է Լևոն (452) և Լեվքոն (205), Աստուածատուր (468) և սրան համանման Պոհտան (27) (Բոհ-դան) անձնանուններին:

Lazar անձնանունը հայերն արտասանում են Ղազար (390), քանի որ փոխառված բառերում հունարեն λ հնչյունը հայերենում փոխարինվում է η -ով: Իսկ Կամյանեց-Պոդիլսկում, օրինակ, տարածված է եղել Lazar-ի ուկրաինական տարբերակը, որը քննվող վավերագրերում հանդիպում է 10 անգամ 5 անձանց համար, մինչդեռ Ղազար-ը՝ 3 անգամ 2 անձի համար: Նույն անվան այս երկու տարբերակները չեն նույնացվել:

Արձանագրված տեղանունները որոշակի պատկերացում են տալիս Կամյանեց-Պոդիլսկի վաճառականների առևտրական և տնտեսական կապերի աշխարհագրության մասին: Բացի մերձակա քաղաքների և ավանների անվանումներից հիշատակվում են Պոլիս կամ Ստամպոլ (Ստամբուլ), Խոթին, Իլով (Լվով), Վարշով (Վարշավա), Օստրոխ (Օստրոհ), Մոսքով (Մոսկվա) և այլ քաղաքներ: Ուշագրավ է Լվով տեղանվան հայկական տարբերակը՝ Իլով (8): Տեղանվան հնչողությունը կարելի է բացատրել մի կողմից ուկրաիներենի որոշակի հնչյունական իրողություններով, երբ որոշ դեպքերում p , $л$, $м$ բաղաձայններից առաջ, որոնցից հետո մի ժամանակ հնչել է $ь$, $ь$, բառասկզբում հանդես է եկել նոր ձայնավոր i (іржа, імла): Այդպես՝ Լվովը որոշ ուկրաինական հարավարևմտյան բարբառներում արտասանվում է իբրև *Львов* կամ *ЛьвоѠ*⁸: Տեղանվան հենց այս ձևն էլ օգտագործել են հայերը՝ իրենց հերթին ինչ-որ բան փոխելով: Չի բացառվում, սակայն, որ այս ձայնավորի առկայությունը ձայնորդ բաղաձայններից առաջ՝ իլախ (լեհ), Իլով, Ըոմաշքո (2) - Ռոմաշքո (588) և այլն, խոսակցական հայերենից և հայատառ-դիչադերենից ժառանգած օրենքների հետևանք է, քանի որ այսպիսի ձև բնորոշ էր նաև հայերենին: Կամյանեց-Պոդիլսկի հայկական դատարանի վավերագրերի հայերենի հնչյունական համակարգը ընդհանուր ստորակարգությամբ հանդերձ հայ-դիչադական և հայ-սլավոնական երկլեզվության պայմաններում նկատելիորեն բաց է: Սլավոնական, այդ թվում նաև ուկրաինական բառույթները հիմնականում պահպանում են իրենց հնչյունական կառուցվածքը. վաղ շրջանի փոխառություններում դիտվում են հարմարեցման տարրեր՝ հավանաբար պայմանավորված հայատառ-դիչադերենի ազդեցությամբ:

Հայոց այբուբենը, անշուշտ, չէր կարող արտահայտել ուկրաիներենի ողջ հնչյունական համակարգը: Այսպես՝ ուկրաինական *И*ին նման ձայնավորի բացակայությունը հայերենում և հայատառ-դիչադերենում հանգեցնում է նրան, որ գրության մեջ այն արտահայտվում է հիմնականում ի, ավելի հաճախ՝ ը տառերով, ինչպես՝ միրոջնիք (ջրադացպան), հնիտըլ (աշխետ):

⁸ Словник староукраїнської мови XIV-XV ст. Т. 1. Київ.1977, 1, с. 56.

Դժվարություն է նկատվում ուկրաիներենի փափուկ և փափկեցված բաղաձայնների գրության ժամանակ: Մի դեպքում նախորդող բաղաձայնի փափկությունը արտահայտվում է ձայնավորից առաջ և տառով, մեկ այլ դեպքում ոչ մի միջոց չի օգտագործվում, օրինակ՝ ուրեատնիք (246), բուխնայ, լօբօդ, զբադերդ և այլն:

Ուկրաիներենի բառապաշարի յուրացման ժամանակ ուշադրություն է գրավում ձևաբանական հետևողական մի առանձնահատկություն: Բառերը, որոնցում բառի փոփոխության դեպքում տեղի է ունենում օրինաչափ հնչյունական հերթազարկություն (օ, е – i; ձայնավոր – զրո հնչյուն), հաճախ գործածվում են թերթված ձևով (մեծ մասամբ՝ սեռական հոլովով): Լուցքա – Луцьк, Եազլովցա – Язлівець, բուդրա (283) – (колт), ջիլբա (283) – телець (հորթ) (լեհերեն *cielca* – *cielca* բառի փոփոխված ձևն է ուկրաիներենի բարբառներում): Հոգնակի ձև ունեցող բազմաթիվ բառաձևերում հայերենում ընկնում է հոգնակի վերջավորությունը՝ բրովոտ (303) – եկեղեցական տոն՝ կապված հանգուցյալներին հիշելու հետ՝ մեռելոց:

Կամյանեց-Պոդիլսկ քաղաքի XVI դարի վերջի XVII դարի սկզբի հայերենով գրված հայկական վավերագրերի լեզվի ուկրաիներենաբանություններին նվիրված այս սեղմ աշխատքը ցույց է տալիս առաջադրված խնդրի բարդությունն ու բազմապլանայնությունը:

УКРАИНИЗМЫ В ЯЗЫКЕ АКТОВ АРМЯНСКОГО СУДА XVI–XVII ВЕКОВ ГОРОДА КАМЕНЕЦ-ПОДОЛЬСКА

ОЛЕКСАНДР БОЖКО (Киев)

Резюме

Возникновение армянских поселений на украинских землях относится к XIII–XIV вв. Важнейшие из них были расположены в таких крупных городах Галиции, Подолии и Вольни как Львов, Каменец-Подольск, Луцк и др. Занимаясь в основном торговлей и ремеслами, армяне в своей повседневной жизни руководствовались своими национальными обычаями. В колониях функционировали армянские церкви и школы. В основе судопроизводства, действовавшего в армянских поселениях, лежал «Армянский судебник» Мхитара Гоша. На протяжении веков в армянских судах хранились написанные на армянском языке многочисленные судебные документы. Исследование с точки зрения современного языкознания дошедших до наших дней письменных памятников судопроизводства армянского суда г. Каменец-Подольска в XVI–XVII вв. показывает, каким образом украинский язык влиял на язык проживающих там армян и как украинская лексика, использовавшаяся в актах суда, изменялась в соответствии с армянской грамматикой. Подобные сложные и многоплановые языковые процессы нашли свое отображение в морфологии, фонетике и лексике исследуемых документов.

UKRAINISMS IN THE LANGUAGE OF THE ARMENIAN COURT DOCUMENTS OF THE
16th – 17th CENTURIES IN THE CITY OF KAMYANETS-PODILSK

OLEKSANDR BOZHKO (Kiev)

S u m m a r y

The first Armenian colonies emerged in Ukraine in the 13th–14th centuries. The largest of them were established in the cities of Lviv, Kamyanets-Podilsk, Lutsk and other cities located in Galicia, Podolia and Volyn. Armenians, mainly engaged in trade and handicraft, preserved their national traditions and customs in their daily life. The Armenian churches and schools were opened in the colonies. The judicial system of the Armenian colonies was functioning on the basis of the “Armenian Code of Law” by Mkhitar Gosh. During centuries numerous Armenian judicial documents were stored in the Armenian courts. Examination from the point of view of modern linguistics of the Kamyanets-Podilsk court written sources of the 16th –17th centuries shows the impact of the Ukrainian language on the language of Armenians living in Ukraine and the changes the Ukrainian basic vocabulary used in the court documents underwent in accordance with the Armenian grammar. Similar complex and diverse language processes reflected in morphology, phonetics and lexicology of the examined documents.